<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԵՂՈՐԱՅՔԻ ԵՎ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՀԱՊՁԲ-2018/4-2-1-ԵՊԲՀ»

ք. Երևան <<09>> << 04 >> 2018 թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա.Մուրադյանի**, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Ա.Ասատրյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5 (հինգ)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **12366580.60 (տասներկու միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ վաթսուն լումա, ներառյալ ԱԱՀ-ն**: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ.2/2
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	h/h1570005065330100
h/h 11500166513800	h/h01222567
ՀՎՀՀ 01503448	Էլ.Փոստ՝ natalipharm@bk.ru
	Տնօրեն՝ Ա.Ասատրյան
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
N «ԳՀԱՊՁԲ-2018/4-2-1-ԵՊԲՀ»
«09» 04 2018 թ. կնքված
ծանկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի									Ժամակարարման		
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գինը/<< դրամ	ընդհանուր գինը/<< դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը ***
2	33611240	Ածուխ ակտիվացված 250մգ Ածուխ ակտիվացված դ/հ 0,25գ	Իրբիտսկի Քիմիադեղագործա-կան գործարան ԲԸ, 643 ՌՈւ, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, Կ. Մարքսի փ.,124 Ռուսաստան	ածուխ ակտիվացվածactivated charcoalդեղահատեր250մգ, ստրիպում (10)	հատ	2.5	75000	30000		30000	
3	33611360	Խոլեկալցիֆերոլ 10մլ Ակվավիտ-D3 ջրային լուծույթ 10մլ	«Տեխնոլոգ» ՀԲԸ, Մանուիլսկոգո փ. 8, 20300 Ուման, Ուկրաինա	խոլեկալցիֆերոլ cholecalciferolլուծույթ ներքին ընդունման375մկգ/մլ (15000ՄՄ/մլ), 10մլ ապակե սրվակ-կաթոցիկ	հատ	660	7920	12		12	
4	33691185	Հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ 40մգ/մլ, 5մլ Ակտովեգին	Տակեդա Ավստրիա	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ լուծույթ ներարկման 40մգ/մլ,5մլ ամպուլներ (5)	հատ	1048	471600	450		450	

		ամպ. 200մգ 5մլ									
7	33661136	Դիազեպամ 5մգ/մլ, 2մլ Միբազոն (Դիազեպամ) ամպ. 0,5% 2մլ	ԽԴՁ 'Զդորովյե նարոդու' ՍՊԸ, Մելնիկովի փ., 41, Ուկրաինա	դիազեպամ diazepamլուծույթ ներարկման5մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում (10, 10/2x5/)	հատ	80	80000	1000		1000	
8	33611350	Ասկորբինաթթու 50մգ/մլ, 2մլ Ասկորբինաթթու ամպ. 5% 2մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, Հայաստան	ասկորբինաթթու ascorbic acidլուծույթ ներարկման5%,2մլ ամպուլներ (10)	հատ	24.8	372000	15000		15000	
9	33661126	Պարացետամոլ, ացետիլսալիցիլաթթու, կոֆեին 200մգ+200մգ+40մգ Ասկոֆեն դ/հ	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ /02093, Կիև, Բորիսպ Ուկրաինա	ացետիլսալիցիլա-թթու, պարացետամոլ, կոֆեին acetylsalicylic acid, paracetamol, caffeineդեղահատեր200մգ+200մգ+ 40մգ, բլիստերում (6, 10)	հատ	14	14000	1000		1000	
10	33661121	Ացետիլսալիցիլաթթու 500մգ Ացետիլսալիցիլաթթու դ/հ 0,5գ	Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԲԸ, 643 ՌՈՒ, Ռուսաստան	ացետիլսալիցիլա-թթուacetylsalicylic acidդեղահատեր500մգ, բլիստերում (10)	հատ	4.4	13200	3000		3000	
11	33691140	Ացետիլցիստեին 200մգ ԱՖՖ դ/փոշի փաթ 200մգ	Սալուտաս Ֆարմա ԳմբՀ, Օտտ-վեն-Գուրիկե-Ալե-1, 39179 Գերմանիա	ացետիլցիստեինacetylcysteineդեղափոշի ներքին ընդունման լուծույթի200մգ,3գ փաթեթիկներ(20)	հատ	88.01	704080	8000		8000	
15	33691138	Դեքստրոզ 400մգ/մլ, 5մլ Գլյուկոզա ամպ. 40% 5մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան,	դեքստրոզ dextroseլուծույթ ներարկման400մգ/5մլ, 5մլ ամպուլներ (10)	հատ	34.1	68200	2000		2000	
16	33641413	Դեքսամեթազոն 1մգ/մլ, 5մլ Դեքսամեթազոն	Վարշավայի դեղագործական	դեքսամեթազոն dexamethasoneակնակաթիլներ (դեղակախույթ)1մգ/մլ,5մլ պլաստիկե	հատ	670.05	23451.75	35		35	

		ակնակաթիլներ 0,1% 5մլ	գործարան «Պոլֆա» Ս.Ա., Կարո Լեհաստան	սրվակ							
17	33611280	Գլիկլազիդ 60մգ Դիաբետոն ՄՐ դ/հ 60մգ	Սերվիե (Իռլանդիա) Ինդաստրիս ՍՊԸ, Գորի Ռոուդ, Արկլո Ֆրանսիա	գլիկլազիդgliclazideդեղահատեր կարգավորվող ձերբազատմամբ60մգ, բլիստերում (30/2x15/)	հատ	126	189000	1500		1500	
19	33691176	Դիլտիազեմ 90մգ Դիլտիազեմ Ռետարդ դ/պ 90մգ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ., Իլֆով, 75100 Օտոպեն Ռումինիա	դիլտիազեմ (դիլտիազեմի հիդրոքլորիդ) diltiazem (diltiazem hydrochloride)դեղապատիճներ երկարատև ձերբազատմամբ90մգ, բլիստերում (21/3x7/)	հատ	47	59220	1260		1260	
23	33611170	Դրոտավերին 20մգ/մլ, 2մլ	Բորիսովյան բուժպատրաստու-կների գործարան ԲԲԸ (64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան) Բելոռուս	դրոտավերին (դրոտավերինի հիդրոքլորիդ)drotaverine (drotaverine hydrochloride)լուծույթ ներարկման20մգ/մլ, 2մլ ամպուլներ (10)	հատ	52.68	79020	1500		1500	
24	33651137	Վանկոմիցին 1000մգ Եղիցին սրվ 1գ №1	Լեկ Ֆարմասյութիքալս դ.դ., Վերովսկովա փ. 57, 1526 Լյուբլյանա Սլովենիա	վանկոմիցին (վանկոմիցինի հիդրոքլորիդ) vancomycin (vancomycin hydrochloride)դեղափոշի և/ե ներարկման լուծույթի1000մգ.ապակե սրվակ	սրվակ	3900	1170000	300		300	
26	33691176	Ֆենսպիրիդ 2մգ/մլ, 150մլ Էրեսպալ օշարակ 150մլ	Լես Լաբորատոիրես Սերվիե Ինդուստրի, 905, Սարան 6., 45520	ֆենսպիրիդ (ֆենսպիրիդի հիդրոքլորիդ)fenspiride (fenspiride hydrochloride)օշարակ2մգ/մլ,150մլ պլաստիկե շշիկ	հատ	2527.35	37910.25	15		15	

			Ժիդի՝ բաց թողնման հսկող, Լես Լաբորատորիրես Սերվիե Ինդուստրի-Ֆյորի լե Օբրե, 326 ռու Մարսելին Բե Ֆրանսիա								
30	33611370	Թիամին 50մգ/մլ, 1մլ Թիամին ամպ. 5% 1մլ	Երևանի Քիմիադեղագ որձա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան Հայաստան	թիամին (թիամինի քլորիդ) thiamine (thiamine chloride)լուծույթ մ/մ ներարկման50մգ/մլ, 1մլ ամպուլներ(10)	հատ	18.6	18600	1000		1000	
31	33661156	Թիմոլոլ 5մգ/մլ, 5մլ Թիմոլոլ ակնակաթիլներ 0,5%5մլ	Էս.Սի. Ռոմֆարմ Քոմպանի Ս.Ռ.Լ Ռումինիա	թիմոլոլ (թիմոլոլի մալեատ) timolol (timolol maleate)ակնակաթիլներ5մգ/մլ, 5մլ պլաստիկե սրվակ-կաթոցիկ	հատ	424.12	2120.6	5		5	
33	33611180	Լակտուլոզ 670մգ/մլ, 200մլ Լաքսալակ օշարակ 200մլ	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ, Արարատի մարզ, ք. Մասիս, Մասիս Կայարան, Գործարանայ ին 22 Հայաստան	լակտուլոզlactulose լուծույթ ներքին ընդունման670մգ/մլ,200մլ պլաստիկե շշիկ և չափիչ բաժակ	հատ	1920	1152000	600		600	
36	33661116	Լիդոկային 20մգ/մլ, 2մլ Լիդոկային հիդրոքլորիդ ամպ 2% 2մլ	Երևանի Քիմիադեղագ որձա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Աճառյան փ., 2-րդ նրբանցք 9	լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) lidocaine (lidocaine hydrochloride)լուծույթ ներարկման20մգ/մլ, 2մլ ամպուլներ(10)	հատ	24.8	37200	1500		1500	

			Հայաստան								
38	33611420	Կալցիումի գլյուկոնատ 100մգ/մլ, 10մլ Կալցիումի գլյուկոնատ ամպ. 10% 10մլ	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13 Ուկրաինա	կալցիումի գլյուկոնատ calcium gluconateլուծույթ ներարկման100մգ/մլ,10մլ ամպուլներ. բլիստերում (10/2x5/)	հատ	128	448000	3500		3500	
39	33671135	Կալցիումի քլորիդ 100մգ/մլ, 5մլ Կալցիումի քլորիդ ամպ 10% 5մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ Հայաստան	կալցիումի քլորիդ calcium chlorideլուծույթ ներարկման100մգ/մլ,5մլ ամպուլներ (10)	հատ	37.2	11160	300		300	
44	33691176	Կետոտիֆեն 1մգ Կետոտիֆեն դ/ն 1մգ	Բելմեդպրեպարա-տի ՀՈՒՁ, 220007, Մինսկ, Ֆաբրիտսիուս փ., 30 Բելոռուս	կետոտիֆեն (կետոտիֆենի ֆումարատ)ketotifen (ketotifen fumarate)դեղահատեր1մգ,բլիստերում (10/1x10/, 30/3x10/)	հատ	5.2	7800	1500		1500	
45	33691176	Կետորոլակ 30մգ/մլ, 1մլ Կետորոլակ ամպ 3% 1մլ	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64/27, Զապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան Բելոռուս	կետորոլակ (կետորոլակի տրոմետամոլ) ketorolac (ketorolac trometamol)լուծույթ ներարկման30մգ/մլ, 1մլ ամպուլներ (10), 1մլ ամպուլներ պիտակ բանդերոլ(10),1մլ ամպուլներ դիվիդելլա (10)	հատ	80	48000	600		600	
47	33621330	Նիկեթամիդ 250մգ/մլ, 2մլ Կորդիամին ամպ 25% 2մլ	Դարնիցա դեղագործական ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկայա փ., 13	նիկեթամիդ nikethamideլուծույթ ներարկման250մգ/մլ, 2մլ ամպուլներ, բլիստերում(10, 10/2x5/)	հատ	118	5900	50		50	

			Ուկրաինա								
48	33621100	Հեպարին (հեպարին նատրիում) 5000ՄՄ/մլ, 5մլ Հեպարին սրվ. 5 000ԱՄ/մլ 5մլ	ԱԲԸ'ԻՆԴԱՐ' Ուկրաինա	հեպարին (հեպարին նատրիում) heparin (heparin sodium)լուծույթ ե/մ ևն/ե ներարկման5000ՄՄ/մլ, 5մլ ապակե սրվակներ (5)	սրվակ	705	4582500	6500		6500	
49	33691176	Հեպարին, անեսթեզին, բենզիլ նիկոտինատ, 25գ Հեպարին քսուք 25գ	Նիժֆարմ ԲԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, ԳՍՊ-459, Ս Ռուսաստան	հեպարին (հեպարին նատրիում), բենզոկային, բենզիլ նիկոտինատheparin (heparin sodium), benzocaine, benzyl nicotinateքսուք արտաքին կիրառման100ՄՄ/գ+40մգ/գ+ 0,8մգ/գ,25գ ալյումինե կամ պլաստիկե պարկում	հատ	632.8	94920	150		150	
50	33691198	Ադեմետիոնին /400մգ+5մլ/ Հեպտրալ ամպ. 400մգ	ամար Լ'Ամիգե (լուծույթն արտադրող Ֆամար Ս.Ա., Հուն Իտալիա	ադեմետիոնինademetioninեղեգփոշի լիոֆիլացված ներարկման լուծույթի400մգ, ապակե սրվակներ (5)և5մլ լուծիչ ամպուլում(5)	հատ	2580	129000	50		50	
53	33661159	Ֆենիլէֆրին 10մգ/մլ, 1մլ Մեզատոն ամպ 1% 1մլ №10	Դեղագործական Ընկերություն "Զդորովյե" ՍՊԸ, Շևչենկո փ., 22, ք. Խարկով Ուկրաինա	ֆենիլէֆրին (ֆենիլէֆրինի հիդրոքլորիդ)phenylephrine (phenylephrine hydrochloride)լուծույթ մ/մ, ն/ե և ե/մ ներարկման10մգ/մլ,1մլ ամպուլներ (10/1x10/, 10/2x5/)	հատ	83	4150	50		50	
54	33642220	Մեթիլպրեդնիզոլոն 250մգ Մեթիպրեդ սրվ 250մգ առանց լուծիչի	Օրիոն Քորփորեյշն, Օրիոնինտի 1, 02200 Էսպոո'բաց թողնման հսկող, երկրորդային փաթեթավորող, Հիկմա Ֆարմացեուտ	մեթիլպրեդնիզոլոն (մեթիլպրեդնիզոլոն նատրիումի սուկցինատ) methylprednisolone (methylprednisolone sodium succinate)ներարկման լուծույթի250մգ, ապակե սրվակ (1)	սրվակ	5000	1400000	280		280	

			իկա, Էստրադա դո Ռիո դա Մո ն.8, 8Ա և 8Բ, Ֆերվենս Ֆինլանդիա								
55	33611260	Մետֆորմին 850մգ Միոֆոր թ/պ դ/հ 850մգ	Բեռլին-Քեմի Ա.Գ. Գերմանիա	մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ)metformin (metformin hydrochloride)դեղահատեր թաղանթապատ850մգ,բլիստերում (60/4x15/)	հատ	40	108000	2700		2700	
60	33661122	Պարացետամոլ 500մգ Պարացետամոլ դ/հ 0,5գ	Իրբիտսկի Քիմիադեղագ ործա-կան գործարան ԲԲԸ, 643 ՌՈՒ, Իրբիտ, Սվերդլովսկի շրջան, Կ. Մարքսի փ., 124 Ռուսաստան	պարացետամոլparacetamolդեղահատեր500մգ,բլիստերում (10)	հատ	4.2	10500	2500		2500	
62	33611390	Պիրիդոքսին 50մգ/մլ, 1մլ Պիրիդոքսին ամպ 5% 1մլ	Երևանի Քիմիադեղագ ործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան Հայաստան	պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ) pyridoxine (pyridoxine hydrochloride)լուծույթ ե/մ, մ/մ և ն/ե ներարկման50մգ/մլ,1մլ ամպուլներ (10)	հատ	16.74	11718	700		700	
63	33661160	Պլատիֆիլին 2մգ/մլ, 1մլ Պլատիֆիլին ամպ 0,2% 1մլ	Դարնիցա դեղագործակ ան ֆիրմա ՄԲԸ, 02093, Կիև, Բորիսպոլսկա յա փ., 13 Ուկրաինա	պլատիֆիլին (պլատիֆիլինի հիդրոտարտրատ)platyphylline (platyphylline hydrotartrate)լուծույթ ներարկման2մգ/մլ, 1մլ ամպուլներ (10) և 1մլ ամպուլներ բլիստերում (10/2x5/)	հատ	99	29700	300		300	
64	33621620	Մպիրոնոլակտոն 25մգ Սպիրոլոն 25մգ	Ռեմեդիկա ՍՊԸ, Լիմասոլ	սպիրոնոլակտոն spironolactoneդեղահատեր թաղանթապատ25մգ, բլիստերում	հատ	35	262500	7500		7500	

		դ/հ	Ինդուստրիալ Իստեյտ, Ահարնոն փ., 3056 Լիմասոլ Կիպրոս	(50/5x10/)							
65	33611440	Թիամին, ռիբոֆլավին, պիրիդոքսին, նիկոտինամիդ /5մգ/մլ+1մգ/մլ+5մգ/մլ+50մգ/մլ/, 2մլ Վիտամին B Կոմպլեքս ամպ. 2մլ	Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա Բուլղարիա	թիամին (թիամինի հիդրոքլորիդ), ռիբոֆլավին (ռիբոֆլավին նատրիումի ֆոսֆատ), պիրիդոքսին (պիրիդոքսինի հիդրոքլորիդ), նիկոտինամիդ thiamine (thiamine hydrochloride), riboflavin (riboflavin sodium phosphate), pyridoxine (pyridoxine hydrochloride), nicotinamideլուծույթ ն/ե և մ/մ ներարկման5մգ/մլ+1մգ/մլ+5մգ/մլ+50մգ/մլ,2մլ ամպուլներ(10)	հատ	149.66	149660	1000		1000	
66	33691176	Ուրապիդիլ 5մգ/մլ. 10մլ Տախիբեն ամպ 50մգ/10մլ	ԷՎԵՐ Նեուրոֆարմա ԳմբՀ Օբերբուրգաու 3, 4866 Ունտերախ, Ավստրիա	ուրապիդիլurapidilլուծույթ ն/ե ներարկման5մգ/մլ, 10մլ ամպուլներ (5)	հատ	1859	464750	250		250	
68	33651116	Ցեֆազոլին 1000մգ Ցեֆազոլին ն/ե և մ/մ սրվ. 1գ	"Բորիսովյան բուժպատրաստուկ-ների գործարան "ԲԲԸ, 64/27, Չապայեվ փ., Բորիսով 222120, Մինսկ շրջան Բելառուս	ցեֆազոլին (ցեֆազոլինի նատրիում) cefazolin (cefazolin sodium)դեղավտշի ներարկման լուծույթի1000մգ.ապակե սրվակ (1, 10)	սրվակ	145	14500	100		100	
69	33621240	Ցիանոկոբալամին 0 5մգ/մլ, 1մլ Ցիանկոբալամին ամպ. 500մկգ/մլ 1մլ	Երևանի Քիմիադեղագործա-կան ֆիրմա ԲԲԸ, ք. Երևան, Հայաստան	ցիանոկոբալամին cyanocobalaminլուծույթ մ/մ կամ ե/մ ներարկման0,5մգ/մլ,1մլ ամպուլներ(10)	հատ	18.6	9300	500		500	

*Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:

*Դեղորայքի մատակարարումը գործարանային փաթեթավորմամբ:

*Վաճառողը Ապրանքի մատակարարումն իրականացնում է 2018 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում: Ապրանքի առաջին փուլի մատակարարման ժամկետը, սահմանվում է 20-22 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

*Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է:

*Դեղերի պիտանիության ժամկետները գնորդին հանձնման պահին պետք է լինեն հետևյալը՝ 2,5 տարվանից ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ, մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն երկու երրորդը, առանձին դեպքերում, այն է՝ հիվանդների անհետաձգելի պահանջի բավարարման հիմնավորված անհրաժեշտությունը, դեղի սպառման համար սահմանված պիտանիության կարճ ժամկետները, դեղը հանձնման պահին կարող է ունենալ դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն մեկ երկրորդը:

*Մատակարարումն իրականացվում է Վաճառողի կողմից՝Գնորդի նշված հասցեով, ք. Երևան Հերացի 58 և/կամ Մուրացան 114 հասցեներով:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 1150016651380 0
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ.2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ15700050653000
հ/հ01222567
Էլ.Փոստ՝ natalifarm@bk.ru
Տնօրեն՝ Ա.Բաղդասարյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված N 2
«09» 04 2018 թ. կնքված
N «ԳՀԱՊՁԲ-2018/4-2-1-ԵՊԲՀ»
ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	33611240	Ածուխ ակտիվացված 250մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
3	33611360	Խոլեկալցիֆերոլ 10մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
4	33691185	Հորթի արյան սպիտակուցազերծ անձանցալ 40մգ/մլ, 5մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
7	33661136	Դիազեպամ 5մգ/մլ, 2մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
8	33611350	Ասկորբինաթթու 50մգ/մլ, 2մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
9	33661126	Պարացետամոլ, ացետիլսալիցիլաթթու, կոֆեին 200մգ+200մգ+40մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
10	33661121	Ացետիլսալիցիլաթթու 500մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
11	33691140	Ացետիլցիստեին 200մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
15	33691138	Դեքստրոզ 400մգ/մլ, 5մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

16	33641413	Դեքսամեթազոն 1մգ/մլ, 5մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
17	33611280	Գլիկլազիդ 60մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
19	33691176	Դիլտիազեմ 90մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
23	33611170	Դրոտավերին 20մգ/մլ, 2մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
24	33651137	Վանկոմիցին 1000մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
26	33691176	Ֆենսպիրիդ 2մգ/մլ, 150մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
30	33611370	Թիամին 50մգ/մլ, 1մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
31	33661156	Թիմոլոլ 5մգ/մլ, 5մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
33	33611180	Լակտուլոզ 670մգ/մլ, 200մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
36	33661116	Լիդոկային 20մգ/մլ, 2մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
38	33611420	Կալցիումի գլյուկոնատ 100մգ/մլ, 10մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
39	33671135	Կալցիումի քլորիդ 100մգ/մլ, 5մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
44	33691176	Կետոտիֆեն 1մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
45	33691176	Կետորոլակ 30մգ/մլ, 1մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
47	33621330	Նիկեթամիդ 250մգ/մլ, 2մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
48	33621100	Հեպարին (հեպարին նատրիում) 5000ՄՄ/մլ, 5մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
49	33691176	Հեպարին, անեսթեզին, բենզիլ նիկոտինատ, 25գ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
50	33691198	Ադեմետիոնին /400մգ÷5մլ/	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

53	33661159	Ֆենիլէֆրին 10մգ/մլ, 1մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
54	33642220	Մեթիլպրեդնիզոլոն 250մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
55	33611260	Մետֆորմին 850մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
60	33661122	Պարացետամոլ 500մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
62	33611390	Պիրիդոքսին 50մգ/մլ, 1մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
63	33661160	Պլատիֆիլին 2մգ/մլ, 1մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
64	33621620	Սպիրոնոլակտոն 25մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
65	33611440	Թիամին, ռիբոֆլավին, պիրիդոքսին, նիկոտինամիդ /5մգ/մլ+1մգ/մլ+ 5մգ/մլ+50մգ/մլ/, 2մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
66	33691176	Ուրապիդիլ 5մգ/մլ, 10մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
68	33651116	Ցեֆազոլին 1000մգ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %
69	33621240	Ցիանոկոբալամին 0.5մգ/մլ, 1մլ	0	0	0	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %	100 %

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով, ընդ որում վճարումը իրականացվում է մատակարարված խմբաքանակին համամասնորեն:

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Գինանգրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
h/h 1500065158000
<<ՀՎՀՀ 01503348>>
Ղեկավար՝ Ա.Մ.Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան,Տիչինա 3-րդ նրբ.2/2
Բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h1570005065330100
h/h01222567
Էլ.Փոստ՝ nataliphar@ebk.ru
Տնօրեն՝ Ա.Ասատրյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N __
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն